№ 1 ՄԱՐՏԻ 15 — 1880 — ՄԱՐՏԻ 15 № 1

ՊՍԱԿ

Հրատարակվում է շաբաթը մի՛անգամ.

Երևանում բաժանորդ գրվել կարելի է միայն Խմբագրատանը.

Տարեկան գինն է Երևանում 3 ռ. իսկ այլ տեղերում 4 ռ.

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ.

Յայտարարութիւններ ընդունվում են և Հայերէն և օտար լեզուներով:

Յայտարարութիւնների իւրաքանչիւր բառի վճարն է 2 կոպ.

Օտարաքաղաքացիք դիմումեն այս հասցէով. Эривань. Въ редакцію Газеты „ПСАКЪ“

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Մի քանի խօսք ,,ՊՍԱԿԻ,, հրատարակման համար: Նամակ Խմբագրին: Նամակ Խմբագրին: Նամակ Վարդան Եղիազարեանցին: Ներքին լուրեր: ,,Պատասխանիք,, Մոսկվայի Հայ ուսանողների Խմբագրութեանը ուղղած նամակին:

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ,,ՊՍԱԿԻ,, ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ.

Ամեն մի նոր երևոյթ, լինի՛ նա նշանաւոր կամ աննշան, երբ որ երևան է գալիս մեր կեանքի մէջ, զբաղեցնում է և՛մեզ քիչ կամ շատ: Ա՛ կամայ թէ ակամայ՝ դառնում է մեր քննութեան առարկայ, և մենք՝ ըստ մեր սովորութեան, տալիս ենք նորան զանազան մեկնութիւններ, սեփականացնում ենք պէսպէս յատկութիւններ, շատ անգամ այնպիսիները, որոնք գոյութիւն ունին միայն մեր երևակայութեան մէջ և ոչ մի կուրիշ տեղ:

Այս տեսակ բացատրութիւնների արժանանում է նա մանաւանդ մի նոր լրագրի հրատարակման ,,ծանուցումն,, որպէս մի նոր երևոյթ, որ ձեռքէ ձեռք ընկնելով ոմանց ծիծաղի և ոմանց ցաւակցութեան է արժանանում՝ կ'գտնուի արդեօք մի մարդ, որ այս տեսակ մի ծանուցումի վերայ լինի էլ նա ամենաճոխն ու ամենա ընդարձակն, ուսերը չ'վեր քաշի, չ'ծիծաղի, չ'զարմանայ, շատ անգամ էլ չ'պախարակի . . . . չ'կարծեմ.

Օտար ազգերի մէջ, կարող ենք ասել, որ այս տեսակ երևոյթներն ընդունվում են շատ սիրով և հասարակութիւնը երբէք չէ խնայում նորան յարատև կենդանի պահելու միջոցներն՝ կարողութեան չափ նիւթապէս թէ հոգեպէս տալիս ու առնում է. քաջալերական խօսք ու ըղձեր հարկաւոր եղած ժամանակն ասվում ու գրվում են, անտեղի յարձակմունք ամեն կողմից ու տեղից պախարակվում են. մայրական քնքշութեամբ ու խնայողութեամբ պակասութիւններն ուղղվում են և գթառատ հօր գովեստները ո՛չ որ պատահած դէպքում՝ ամեն տեղ լսել ու տարածել տալ չէ գլանում:

Մեզանում՝ Հայերիս մէջ՝ եթէ ո՛չ բոլորովին, գոնէ մասամբ՝ ընդհակառակն է, ո՛չ թէ միայն նորա են յարձակվում և գիշեր ու ցերեկ պախարակում այս ինչ կամ այն ինչ անձնաւորութիւն, կամենալով վար ձգել նորա աշխատանքը, նորա քրտամբ երեսաց վաստակածը, որովհետև դիպչում է այս ինչ կամ այն ինչ մարդոյ շահերին, այլ թէ նոքա ևս, որոնք տարենը մէկ կամ երկու անգամ լրագիր չեն կարդում, տարիներով լրագրի երես չեն տեսնում, լրագրից՝ որպէս մէկ խոտից, հազարաւոր մղոններով հեռու են փախչում. բացի որ իւրեանք լրագիր չեն կարդում, չեն սիրում կարդալ. օգնութիւն տալ բոլորովին մերժումեն, թէև շատ անգամ կարող էին և տալ առատապէս. նոցա ջանքն ու աշխատանքն գլխաւորապէս տեսնում ենք գործադրած, որ ուրիշներին ևս դրդեն, համոզեն, որ նոքա ևս չկարդան, չգրվին և, եթէ կարելի է, նորան իւր գոյութեան սկզբի մէջ բնաջինջ առնեն:

Բայց ինչ կերպով որ և հալածուի նա, այնու ամենայնիւ մենք համոզուած ենք, որ ժամանակի երկաթեայ պահանջները կյաղթեն պահանջելով տգիտութեանը մինչ յարդ գոհ եղած իւր իրաւունքներն և արժանացնելով նորանց՝ իւր թըշուառ հակառակորդներին՝ միայն ծաղրի և արհամարհանքի:

Որովհետև ինչպէս մարդուս առանձնական կեանքի յարատև պահպանելու համար անհրաժեշտ է ամենօրեայ սնունդ ու կերակուր, նոյնպէս և հոգեկան կեանքի համար հարկաւոր է սնունդ ու կերակուր: Առաջինը, ինչպէս մեզ բոլորիս յայտնի է՝ սնունդ ու կերակուր ստանում է իւրեան շրջապատող անշունչ աշխարհից՝ հողից, ջրից, օդից, և՛ն և՛ն՝ երկրորդ նոյնպէս իւրեան շրջապատող՝ միայն շնչաւոր աշխարհից՝ մարդկային, ազգային, ու անհատական կեանքից:

Սոցա զարգացնող ու աճեցնողն, միացնող ու բաժանողն-լրագիրն է:

Այն լրագիրը որ նմանում է մի ծովակի, որն ինչպէս ընդունում, նոյնպէս դուրս է թողնում մարդկային կեանքի գետերն՝ գիտութեան ճիւղերն:

,,ՊԱՏԱՍԽԱՆԻՔ,,

Մոսկուայի Հայ-ուսանողների ,,ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆԸ,, ՈՒՂԱՐԿԱԾ ՆԱՄԱԿԻՆ

ՊԱՐՈՆԱՅՔ.

Անցեալ ամսի երեքից, Մոսկվայից ուղարկած Ձեր պատուական նամակը եկաւ հասաւ ինձ: Այդ առանձնունելի պատուի համար, ես սրբազան պարտականութիւն եմ համարում տպագրել Ձեր նամակի հետ և իմ ,,Պատասխանիքը,,:

Իմ ,,Պատասխանիքը,, որի մէջ նախ խորին շնորհակալութիւն յայտնելով, ցանկալի է ինձ ծանօթացընել Ձեզ մի քանի նամակով այն սկզբունքների հետ, որոնք դրդել են ինձ ձեռնամուխ լինել այսպիսի մի ծանր ու վսեմ գործի:

Այո, գործը մեծ է, վսեմ է, իսկ իմ ույժը փոքր է. աննշան է. . . ուրեմն, հնարաւոր կլինի ինձ, արդեօք, գոնէ մասամբ արդարացնել Ձեր կարծիքը, լցուցանել Ձեր ակնկալութիւնը պսակել Ձեր յոյսը-այս հարցին այժմից ոչ դրական և ոչ ժխտական պատասխան կարելի է տալ, բացի այն, որ ամեն մարդ պարտական է գործել առնել.

Բայց մասնաւոր անձինք, ,,Ես,, ,,Դու,, ,,Նա,, կարող ենք գործել, առնել, երբ բարձրանալով ընդհանուրի միջից, կծառայենք մեր մասնաւոր գործունէութեամբ, մեր մասնաւոր գիտակցութեամբ ընդհանուրի բարօրութեան, բարգաւաճութեան ու լուսաւորութեան մեծ գործին և, կգործենք նպատակայարմար, երբ կձուլուենք հասարակ ժողովրդի հետ, երբ մեր անձնաւորութեան ու հասարակ ժողովրդի մէջ կլինի մէկ անխզելի կապ ու կենդանի կապակցութիւն:

*

,,Հասարակ ժողովուրդը *) ոչինչ առանձին յատկութիւն և անուն չունի, բացի մարդու և քրիստոնեի անունից: Որքան հարուստ է այս աղքատութիւնը, և գտնվելով ցած աստիճանի վերայ, ինչպէս բարձր կանգնած է նա: Նա մարդ է և քրիստոնեայ, ոչինչ ունի բացի Քրիստոսից, բայց Քրիստոս ունենալով ամենայն ինչ ունի: Նա իւր վերայ կրելով մարդու և քրիստոնեի անուն, արդէն գաղափար է ամբողջ մարդկային և քրիստոնէական ընկերութեան: Ու այն մարդիքը, որ պատահաբար ստացած լէին աշխարհի երեսին փայլուն կոչումն, հարստութիւն և առանձնաշնորհութիւնք, երբ նայումեն իւրեանց յատկութիւններին վերայ, ոչ որպէս հպարտանալու չարժառթի և ուրիշներից գերազանցութեան վերայ, այլ որպէս ժամանակի պահանջողութեան վերայ յառաջացած աշխարհի անկատարութիւնից, այն ժամանակ ստուգագործումեն, որ ինքեանք ևս նոյն մարդն են և նոյն քրիստոնեայն, ամենևին անխտիր,,:

(*) Միք. Նալբանդեան:

*

Հասարակ ժողովուրդը մէկ ազգի, իսկ ընդհանուր հասարակ ժողովուրդը, մարդկութեան հասարակական շինուածքի հիմքն է: Նա մի ազգի կորիզնէ, իսկ առաջադէմ ու լուսաւորուած դասը, նորա ծաղիկն ու հասած պտուղն: Նա պարունակում է իւր մէջ բոլոր սքանչանքները մարդկութեան կամ մէկ ազգի: Արհամարհել կորիզն, սիրել ծաղիկն ու պտուղը, նշանակի չճանաչել, անծանօթ լինել ծառի գոյութեան, նորա ծնման, աճման ու զարգացման հետ: Չէ որ պտղի սաղմը կորզուածէ. դուրս նետել կորիզը նոյն է, որ ձեռք քաշել պտղից. առանց կորզի պտուղ և առանց հասարակ ժողովրդի ուրիշ աւելի բարձր դասակարգ չկայ, այս տեղից է որ բոլորն իւր ըսկիզբն է առնում. Նա ծնողն է բոլոր մէկ ազգին պատկանող դասակարգերի. սա այն առատ ու պարարտ հողն է, որ ուր որ ինչ ցանես, այն և անշուշտ կըհնձես: Սորանից է կախ բարգաւաճութիւն, բարօրութիւն մէկ ազգի կամ ընդհանուր մարդկութեան: Նոյն պարտիզպանն է, Նախախնամութիւնը, որ մշակում ու հոգատար է լինում բոլորի համար: Սաղմը արդէն պարունակում է պտղի աճման բոլոր պայմաններն. Նորա պտուղ դառնալու համար հարկաւոր է միայն մէկ յարմար տեղ ընել և ազատ թողնել. նա արդէն շուտ թէ ուշ կբերի, կտայ տենչալի պտուղն:

*

Պարտէզի ծառերի պտուղը, ինչպէս և մարդկութեան վերջին նպատակը—մէկ է. զանազանութիւնը

Սրանք անդադար ռեռդանելով դաշտերը՝ աղգային, լենոանական ու անհատական կեանքի, և արգասաւոր են առնում սրանց։ Սրանց ափերումն են, որ երևում են կանաչ անտառներն, ծաղկալի ու ծաղկափթիթ դալարներն, մարդալի ու մարդաբնակ գիւղերն ու քաղաքներն։

Լրագիրը տարածելով գիտութեան ճիւղերն ընդհանուր կեանքի մէջ, տալիս է ստեղծում է հասարակական կեանք, որը զարգանալով ու աճելով ծովակի նման՝ դուրս է թողնում իւրեանից հազարաւոր գետեր, գաղափարներ, որոնց օգնութեամբ չքանումեն չարիքներն, դալիս են բարիքներն. վերանում է մութը և նորա տեղ բռնում է լոյսը։

Գիտութիւնը կլինէր և կմնար մի քանի բաղտաւորների սեփականութիւն, եթէ չլիներ լրագիրը։ Սա կդիզուէր և կկիտուէր մի քանի համբարներում, որ, ուրիշ մթերների նման, վերջը ապարդիւն կկորչէր, կերթար։

Գիտութիւնը տարածել, ընդհանրացնել ժողովրդի ամեն դասակարգի մէջ ժամանակի պահանջներին համեմատ, հաղորդակցութիւնը անձնաւորութիւնների, աղգերի մէջ դիւրացնել, յարակցութեան արգելքներները վերացնել, գիտութիւնը գործածական, ամենին մատչելի դրոշմած դրամ շինել - լրագրին է միայն սեփական։

Էօրնէն՝ երբ հրատարակում էր իւր ,,Գշիռ,, օրագրի ծանուցումն, ասում է՝

,,Ազնիւ գիտութեան գանձը, որ հայթհայթուած է աշխատասէր ուսմնասիրութեամբ խորհրդաւոր մարդկային ոգւոյ խորքից, շատ անգամ ամբողջ տասը տարիներով դանդաղում է ծածուկ պահեստներում՝ ոչ ոք նորան չի մերձենում, նորա տիրողին ոչ բաւականութիւն և ոչ օգուտ չի հասուցանում։ Նորանից զրկվողներին մնում դա անյայտ կամ անմատչելի, այնպէս՝ որ, պատահում է, շատերը, ծարաւի հսեմ կամ պայծառ զգացուած պահանջներով, մեռնումեն գանձով ողջապատուած ժամանակն։,,

Կլինին շատերը, որ կասեն թէ ոգագիրն ունի՞ էս իւր վնասակար ու վնասաբեր կողմերը. նա շատ անգամ փոխանակ բարեաց պատճառ է լինում չարեաց. փոխանակ սերհամակրութիւն՝ տարածում է՞ վնաս, չարութիւն։

,,Ողջը մարդկային գիտութիւնը,, ասում է նոյն հեղինակը, ,,մի մետաղ է, ուրիշ բան չի-որով վաճառվում է կեանքը. ինքն իրան հասկանալի է որ օգտաւէտութեան հետ եղած անպէտքը տալիս է միայն օգտաւէտ դառնալու միջոց և նոցա գնին համապատասխան օգուտը՝ տիրողին վճարվում է միայն նորա երևան գալուց յետոյ։ Որովհետև՝ ճշմարտութեան ձոյլը, որ դիզվում է հարուստ ոգւ վ մեծ երկասիրութիւնների մէջ չէ կարող լինել բաւականութեան պիտանի՝ ամենօրեայ կենսական պահանջներին աղքատ ոգւով մարդկանց։ Այդ պիտանաւորութիւնը ունի՞ միայն գործածական դրամի նման դրոշմած գիտութիւնը։

,,Օրագրները կազմումեն իսկ և իսկ այդ դրամը. նորա պահպանումեն դրամական շրջանը տեսութեան և փորձի մէջ։ Միայն նորա են մուծանում՝ գիտութիւնը կեանքի մէջ և կեանքը վերադարձնումեն գիտութեանը։ Ճշմարիտ է, որ ,,օրագրները՝ գործածական դրամի նման իւրեանց ամրութիւնը՝ պահպանելու համար առանց հասարակ մետաղի խառնուրդի կարող չեն կառավարվել. բայց այն ինչ որ առաւելացնում է իրի պիտանաւորութիւնը, չէ կարող նորա արժանաւորութիւնը նուազցնել։ Ստոյգ է որ պղինձը աղդերի մէջ լրագրներով տարածուած՝ ունի աւելի մեծ արժէք, քան դրքերի մէջ պարունակուած ոսկը։ Ուրեմն թող տարածումն մի քանի ճշմարտութիւնների հնարաւոր լինի միայն խառնուրդի օգնութեամբ. թող մուտքը կանոնաւոր և առողջ վճռահատութեան հնարաւոր լինի միայն այն դէպքում, երբ նա միաւորուած լինի նախապաշարմունքների հետ-այդ ոչինչ-վերջ ի վերջոյ անպէտքը՝ վար կընկնի և միայն լաւը կմնայ վերևումը,,։

,,Վերջ ի վերջոյ անպէտքը վար կընկնի՝ և վերևումը կմնայ լաւը,,։

Ուրեմն՝ թող չվհատուին նորա, որոնք համոզուած են, որ օրագրները գործածական դրամի նման, իւրեանց ամրութիւնը պահպանելու համար, խառնուրդներ ունենում։ Այդ խառնուրդը վնասակար չէ։ Նա տալիս է ազնիւ մետաղին ամրութիւն, անպէտքն ու անպիտանն դառնում է միջոց լաւի, պիտանաւորի գործածականութեան, ընդհանրանալու համար, պատիւ, յարգանք ոսկու, ճշմարտութեան, իսկ ատելութիւն ստի, կեղծի համար։

Ապա ուրեմն ստոյգ է, որ, եթէ չլիներ լրագիրը՝ ժամանակի օրագրութիւնը, հազարաւոր բարիքներ կրմնային անմատչելի, բիւրաւոր չարիքներ անտեսանելի, անպատիժ։

Բարիքներ վայելողներն կլինէին մի քանի բաղդաւորներ, հարուստներ, իսկ նրանից զրկվողները՝ բիւրաւոր աղքատներ։

Չարիքները կգործվէին անդիմաւանհամար, չէր լինել ոգկը, որ կանչէր դատաստան. դատաստան ուր քննվեր արդարն ու մեղաւորն, անմեղն ու յանձաւորն։ Առաջինք ըստանալով առատ պարգև, քաջալերութիւն, խրախուսանք, իսկ երկրորդք պատիժ, բանտ ու կապանք։

Այսպէս կերթար, կանցնէր ժամանակը՝ մեղքը կդիզվէր մեղքի, յանցանքը՝ յանցանքի վերայ և կլինէր մէկ ընդհանուր խաօս (թոհ և բոհ)։

Մեր լրագիրը՝ ,,ՊՈՍԿԸ,, կլինի ժամանակի օրագրութիւն. նա կընդունի իւր մէջ՝ ինչ որ ժամանակի ալիքները կբերեն կհասցնեն նորան. նա դուրս կթողնի, ինչ որ նոյնպէս ժամանակի ալիքները կքաշեն, կտանեն նորանից։ Նա կլինի մէկ ընդհանուր ընդունարան, ուր հարուստ ու աղքատ, մեծ կամ փոքր, բարեկամ ու չարակամ, ծանօթ կամ անծանօթ եղ ու մուտ կունենայ առանց երեսպաշտութեան ու կեղծաւորութեան, նորա մէջ որպէս ընդհանուր գանձարանի մէջ դայանում է միայն նորանում, որ մէկը շուտ, իսկ միւսը ուշ է աճում, զարգանում ու պտղատու դառնում։ ուրեմն լաւ ու վատ չկայ, իսկ կայ յետ ու առաջ և, այդ ,,յետ ու առաջը,, պայմանաւորուած է ինչպէս ծառինը, նոյնպէս և մարդինը տեղի հանգամանքից, օդի ազդեցութիւնից և նորան շրջապատող հանգամանքներից։

*

Պարտիզպանը հարուստ է, երբ պարտիզի ծառերը, շուտ թէ ուշ, բոլորը ամեն մէկն իւր ժամանակին ձմերայինը ձմեռը, աշնանայինը աշնանը, գարնայինը գարնանը, կբերեն կտան պտուղ։

Նոյնպէս մէկ ազգ հարուստ ու բաղտաւոր է ոչ թէ այն ժամանակ, երբ առանձին առանձին անհատներ բաղտի բերմունքով առաջնորդուած երևան են՝ գալիս, այլ այն ժամանակ, երբ լաւն ու վատն ոչնչանալով, տիրում է այնտեղ միայն յետն ու առաջն։

*

Հատ օտարոտի բան է մէկը պախարակել, իսկ միւսը գովաբանել։ Մարդս մարդ է. նա ստեղծուած է, ունեսիրութեամբ խորհրդաւոր մարդկային ոգւոյ խորքից, շատ անգամ ամբողջ տասը տարիներով դանդաղում է ծածուկ պահեստներում՝ ոչ ոք նորան չի մերձենում, նորա տիրողին ոչ բաւականութիւն և ոչ օգուտ չի հասուցանում։ Նորանից զրկվողներին մնում դա անյայտ կամ անմատչելի, այնպէս՝ որ, պատահում է, շատերը, ծարաւի հսեմ կամ պայծառ զգացուած պահանջներով, մեռնումեն գանձով ողջապատուած ժամանակն։,,

Կլինին շատերը, որ կասեն թէ ոգագիրն ունի՞ էս իւր վնասակար ու վնասաբեր կողմերը. նա շատ անգամ փոխանակ բարեաց պատճառ է լինում չարեաց. փոխանակ սերհամակրութիւն՝ տարածում է՞ վնաս, չարութիւն։

,,Ողջը մարդկային գիտութիւնը,, ասում է նոյն հեղինակը, ,,մի մետաղ է, ուրիշ բան չի-որով վաճառվում է կեանքը. ինքն իրան հասկանալի է որ օգտաւէտութեան հետ եղած անպէտքը տալիս է միայն օգտաւէտ դառնալու միջոց և նոցա գնին համապատասխան օգուտը՝ տիրողին վճարվում է միայն նորա երևան գալուց յետոյ։ Որովհետև՝ ճշմարտութեան ձոյլը, որ դիզվում է հարուստ ոգւ վ մեծ երկասիրութիւնների մէջ չէ կարող լինել բաւականութեան պիտանի՝ ամենօրեայ կենսական պահանջներին աղքատ ոգւով մարդկանց։ Այդ պիտանաւորութիւնը ունի՞ միայն գործածական դրամի նման դրոշմած գիտութիւնը։

,,Օրագրները կազմումեն իսկ և իսկ այդ դրամը. նորա պահպանումեն դրամական շրջանը տեսութեան և փորձի մէջ։ Միայն նորա են մուծանում՝ գիտութիւնը կեանքի մէջ և կեանքը վերադարձնումեն գիտութեանը։ Ճշմարիտ է, որ ,,օրագրները՝ գործածական դրամի նման իւրեանց ամրութիւնը՝ պահպանելու համար առանց հասարակ մետաղի խառնուրդի կարող չեն կառավարվել. բայց այն ինչ որ առաւելացնում է իրի պիտանաւորութիւնը, չէ կարող նորա արժանաւորութիւնը նուազցնել։ Ստոյգ է որ պղինձը աղդերի մէջ լրագրներով տարածուած՝ ունի աւելի մեծ արժէք, քան դրքերի մէջ պարունակուած ոսկը։ Ուրեմն թող տարածումն մի քանի ճշմարտութիւնների հնարաւոր լինի միայն խառնուրդի օգնութեամբ. թող մուտքը կանոնաւոր և առողջ վճռահատութեան հնարաւոր լինի միայն այն դէպքում, երբ նա միաւորուած լինի նախապաշարմունքների հետ-այդ ոչինչ-վերջ ի վերջոյ անպէտքը՝ վար կընկնի և միայն լաւը կմնայ վերևումը,,։

,,Վերջ ի վերջոյ անպէտքը վար կընկնի՝ և վերևումը կմնայ լաւը,,։

Ուրեմն՝ թող չվհատուին նորա, որոնք համոզուած են, որ օրագրները գործածական դրամի նման, իւրեանց ամրութիւնը պահպանելու համար, խառնուրդներ ունենում։ Այդ խառնուրդը վնասակար չէ։ Նա տալիս է ազնիւ մետաղին ամրութիւն, անպէտքն ու անպիտանն դառնում է միջոց լաւի, պիտանաւորի գործածականութեան, ընդհանրանալու համար, պատիւ, յարգանք ոսկու, ճշմարտութեան, իսկ ատելութիւն ստի, կեղծի համար։

Ապա ուրեմն ստոյգ է, որ, եթէ չլիներ լրագիրը՝ ժամանակի օրագրութիւնը, հազարաւոր բարիքներ կրմնային անմատչելի, բիւրաւոր չարիքներ անտեսանելի, անպատիժ։

Բարիքներ վայելողներն կլինէին մի քանի բաղդաւորներ, հարուստներ, իսկ նրանից զրկվողները՝ բիւրաւոր աղքատներ։

Չարիքները կգործվէին անդիմաւանհամար, չէր լինել ոգկը, որ կանչէր դատաստան. դատաստան ուր քննվեր արդարն ու մեղաւորն, անմեղն ու յանձաւորն։ Առաջինք ըստանալով առատ պարգև, քաջալերութիւն, խրախուսանք, իսկ երկրորդք պատիժ, բանտ ու կապանք։

Այսպէս կերթար, կանցնէր ժամանակը՝ մեղքը կդիզվէր մեղքի, յանցանքը՝ յանցանքի վերայ և կլինէր մէկ ընդհանուր խաօս (թոհ և բոհ)։

Մեր լրագիրը՝ ,,ՊՈՍԿԸ,, կլինի ժամանակի օրագրութիւն. նա կընդունի իւր մէջ՝ ինչ որ ժամանակի ալիքները կբերեն կհասցնեն նորան. նա դուրս կթողնի, ինչ որ նոյնպէս ժամանակի ալիքները կքաշեն, կտանեն նորանից։ Նա կլինի մէկ ընդհանուր ընդունարան, ուր հարուստ ու աղքատ, մեծ կամ փոքր, բարեկամ ու չարակամ, ծանօթ կամ անծանօթ եղ ու մուտ կունենայ առանց երեսպաշտութեան ու կեղծաւորութեան, նորա մէջ որպէս ընդհանուր գանձարանի մէջ դայանում է միայն նորանում, որ մէկը շուտ, իսկ միւսը ուշ է աճում, զարգանում ու պտղատու դառնում։ ուրեմն լաւ ու վատ չկայ, իսկ կայ յետ ու առաջ և, այդ ,,յետ ու առաջը,, պայմանաւորուած է ինչպէս ծառինը, նոյնպէս և մարդինը տեղի հանգամանքից, օդի ազդեցութիւնից և նորան շրջապատող հանգամանքներից։

*

Պարտիզպանը հարուստ է, երբ պարտիզի ծառերը, շուտ թէ ուշ, բոլորը ամեն մէկն իւր ժամանակին ձմերայինը ձմեռը, աշնանայինը աշնանը, գարնայինը գարնանը, կբերեն կտան պտուղ։

Նոյնպէս մէկ ազգ հարուստ ու բաղտաւոր է ոչ թէ այն ժամանակ, երբ առանձին առանձին անհատներ բաղտի բերմունքով առաջնորդուած երևան են՝ գալիս, այլ այն ժամանակ, երբ լաւն ու վատն ոչնչանալով, տիրում է այնտեղ միայն յետն ու առաջն։

*

Հատ օտարոտի բան է մէկը պախարակել, իսկ միւսը գովաբանել։ Մարդս մարդ է. նա ստեղծուած է, Աստուծոյ պատկերի՝ նորա պարտքն ու բաղդաւորութիւնը կայանում է նորանում, որ նա լինի ճշմարիտ այդ պատկերի և չցանկանալ լինել մէկ ուրիշ բան, բացի մարդ Աստուծոյ պատկերի։ Սորանով արդէն բացատրվում է մարդուս սկիզբն ու վախճանն։

*

Մեզանում մարդը բաժանվում է երկու տեսակի հասարակ և անհասարակ (ազնուական). առաջինին սեփականացնվում են յատկութիւններ, որոնք բոլորովին պակասումեն երկրորդին։ Հասարը մէկին մեծարելով կամենումեն սորացնել միւսին. մէկի սորաղրութեան մէջ, կարծում են տեսնել յառաջադիմութիւնը միւսների մէկը ծառայում է միւսի բարօրութեան ու բարդաւաճութեան համար — այսպէս պարարտանալով ու զօրեղանալով նուաճում ու ընտրկացնում է միւսին. շատ անգամ էլ, երբ անասնական մասը ծայրահեղութեան է հասնում, կլանում է զօրեղն թոյլին։

*

Այս հանգամանքից ծագումեն անհնական հետևանքները, անկարդուութիւն, շփոթութիւն, մեծութիւն, փոքրութիւն, ևն ևն։ Ցկարութիւնը առնում է իւր սկիզբն. սա դէթ աճում ու սաստկանում է. դէթ պակասում ու թուլանում է։ Հանդան բժիշկներ երևան են դուրս գալիս իւրեանց դեղերով ու դարմաններով. մէկն այսպէս, իսկ միւս այնպէս է բացատրում և իւր դեղը գործադնում, և ի՞նչ — անտեղեակ տկարութեան տեղական հանգամանքներից, նա առնում է նորա առաջը միայն ժամանակաւորապէս։ . . . .

*

Գնում է սա և գալիս է միւսը, ժամանակն անցնում է, ինչպէս ահա արդէն հինգ հարիւր տարի է անցել և տկարութիւնը նոյն է մնացել։

*

Այո՛, սիրելի ուսանողներ, ազնիւ ընկերներ, հարկաւոր է մեզ տեղական հանգամանքները քննադատութեան ենթարկել, գաւառները ուսումնասիրել, խեղճ թշուառ դիւղացուն սիրել ու պաշտպանել, որպէս զի հնարաւոր լինի բուժել ,,Հայաստանի Վէրքը,,, ազատել ,,Հային,, Տաճիկ ու Պարսիկ ազգերի բարբարոս իշխանութեան գազանից։

*

Ուսումնասիրելով գաւառներն ու տեղական հանգամանքներն, Հանանք մատնացոյց լինել այնտեղի ՀԱՍԱՐԱԿ ու օգտաբեր երևոյթների վերայ. առաջինը աշխատել դուրս մղել նոցա կեանքից, իսկ երկրորդը ներս տանել նոցա կեանքի մէջ։ Աշխատանք ի չէք դարձնել նոցա շրջապատող բոլոր ՀԱՍԱՐԱԿԱՐ հանգամանքներն. տանք նոցա բնաւորութիւնը ընդարձակ յատկութիւններին ազատ ուճել, մեծանալ. չթողնենք որ նորա անժամանակ թառամեն ու վերջը անպտուղ կորչեն գնան։

*

Այո՛, ազնիւ ընկերներ, մեր հիւանդութիւնը ընդհանուր օրգանական չէ, այլ տեղական է, բոլոր մեր գործարանները վարակուած չեն, այլ միայն մի գործարան է տկար։

Մեր գաւառները ամեն կողմից, թէ՛ նիւթաւոր և թէ՛ մտաւոր թշուառ կացութեան մէջ են։ Գիւղացին, մեր ազգի արիւնն ու մարմինը, անտէր ու անտիրական է, անտուն ու անտեղ է. օր ուտում է օր չի ուտում՝, համարեա՝ գիշեր ու

ամեն մեկը մեզանից ազատ կամք կձգի իւր աշխատանքի լումայն, որ ղիզուելով ու կիտուելով, վերջը կբերի ու կռայ մեզ մեր սրտի ցանկացած պտուղն ու արդիւնքն:

(Կը շարունակվի).

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Այս վերջին ժամանակներում՝ մեր քաղաքում՝ մեկմեկու հետևից երևան եկող դէպքերն, ինչպէս Ձեզ յայտնի է, բաւականին նշանաւոր լինելով՝ արժանի են մի քանի նկատողութիւնների: Այս պատճառաւ խնդրում եմ չզլանաք տեղի տալ Ձեր պատուական Թերթում հետևեալ ճշմարտութիւններին, որով լիայոյս եմ, ճշգիւ կ'բացատրեն այդ տխուր դէպքերի այդպէս յանկարծ երևան գալու պատճառները:

Երևանը խաղալիք է դարձել մի քանի բռնաւոր մարդկանց ձեռքում: Մի քանի մարդիք, որոնց բոլորովին անծանօթ էր «առաքինութիւն» ու «բարոյականութիւն» ասած խօսքերը, այսօր տես նելով իւր անձնական օգուտներն ու շահերն ոտնակոխ են լինում և չեն տալիս իւրեանց սրտի ու կամքին համաձայն արդիւնք, խօսում են միայն առաքինութեան ու բարոյականութեան վերայ: Զարմանալի երևոյթ . . . Նոցա հասկացողութեամբ «բարոյականութիւն» ու «առաքինութիւն» մեկ արուեստ է, որով մեկ մարդ կարող է իւրեան բարոյական ու առաքինի ձևացնել, առանց միմազաչափ իւրեան անձնական օգուտներից ու շահերից հեռանալու. Նոցա հասկացողութեամբ բարոյական ու առաքինի լինել, կ'նշանակէ տալ աւելի մեծ ու ընդարձակ ասպարէզ ոտից մինչև գլուխը բանտ մեկ խարդախ գործի:

Ցաւելով պէտք է ասենք, որ այսօր՝ հնարել տեսակ տեսակ չեղած բաներ մի մարդու արժանաւորութիւն ստորացնելու, նորա հասարակական օգտաւէտ գործունէութիւնը ի դերև հանելու համար, առաքինութիւն ու բարոյականութիւն բառերով վարագուրել սևահոգութիւն, ագահութիւն, անձնական ճշնամական յարաբերութիւններ և այլն, և այլն, դարձել է մեր քաղաքում մի քանի շրջմոլիկ մարդկանց արտօնութիւն, որ սպառնում է աչաւոր վտանգ անդուլ աշխատութեամբ նորանոր կառուցած հասարակական տաճարի ճարտարապետական շինուածին:

Այո, մեզ սպառնում է վտանգ և մեր հասարակական գործերը այս րոպէիս յուսահատ դրութեան մեջ են.—Երևանցիները քնած են և հաւատում են քաղըքաժպիտ, բայց դառնաշունչ մարդերի հաւաստութիւններին:

Բայց Երևանցիք՝ մի ընդայէք հաւատ այդ եղկելի սոփեստներին—եթէ ոչ կզղջաք, կզղջաք . . . բայց յետոյ կլինի արդէն ուշ:

Դուք Ձեր գործը լաւ էք սկսել. հիմքը բաւականին պինդ ու ամուր էք դրել. Ձեզ մնում է միայն սկսած գործը շարունակել, որ այդ տաճարը ոտքի կանգնի. Ձեր աշխատութիւնը ապարդիւն չ'կորչի. գործը Թերի չմնայ. ընդհակառակը, շատ ժամանակ չանցած, դեռ ևս Ձեր կենդանի ժամանակ նա գայ հասնի Ձեր ցանկացած վախճանին:

Ո՞վ չ'գիտէ, ում յայտնի չէ, որ մի շինութեան, մանաւանդ մի նոր շինութեան, եթէ մի քարը, մի փայտը ոչ թէ միայն բոլորովին խախտվեն անես, այլ և եթէ շարժես տեղից, ամբողջ շինութիւնը կ'խախտուի, իւր հաւասարակշռութիւնը կ'կորցնի և ժամանակի ամենափոքր հոսանքին չ'դիմանալով՝ վար կ'ընկնի և կ'կորչի կերթայ բոլոր Ձեր աշխատութիւնը:

Կ'զղջաք, կ'զղջաք Երևանցիներ, եթէ ձեռք էք զարկել միայն մի քարին, մի փայտին այդ շինութեան. այդ շինութիւնը հիմն ի վեր կ'տապալի և կ'մնայ Ձեզ միայն նորա աւերակները, որ կլինին բնակարան Բուէճների ու Չղջիկների:

Հաւատացէ՛ք, որ այդ աւերակները կլինին կենդանի արձաններ Ձեր անմտութեան ու դիւրահաւատութեան օտարների և գալոց սերունդի մօտ, որոնցից մեկը արհամարհելով, իսկ միւսը ցաւակցելով կ'յիշէ Ձեր գործերն:

Արհամարհելով, որովհետև Դուք արհամարհեցիք, չ'հետևեցիք Նախախնամութեան առատ պարգևն. իսկ ցաւակցելով՝ որովհետև Ձեր անմտութեամբ ու դիւրահաւատութեամբ զրկեցիք նորանց այդ պարգևի, այդ արտօնութեան ժառանգութիւնից:

Լաւ մտածեցէ՛ք և ապա գործեցէ՛ք Երևանցիներ, եթէ ոչ կ'զղջաք, կ'զղջաք. բայց կլինի արդէն ուշ:

Կ.

28 Փետրվարի 1880 Թ.
Երևան.

ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄ ԲԱՐԵԿԱՄ

Պ. ՎԱՐԴԱՆ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ,

Առաջին համարում լրագրիս, այս փոքրիկ Թերթի մեջ, չ'յայտնել ըզգացածս, անհնարին եմ համարում. Ուրեմն, Թոյլ տուեցէ՛ք հրապարակապէս ասել, որ անբաւ շնորհակալութեամբ է բաբախում սիրտս, երբ մտաբերում եմ Ձեր անաչառութիւնը, արդարասիրութիւնը. Գիտեմ, որ եթէ չ'լինէր Ձեր ճշմարտասիրութիւնը, կլինէին և այսօր գործերս ամենամշուառ կացութեան մեջ. Շրջապատուած անբաւ Թշնամիներով, որոնցից շատերը շատ մօտ ազգականութեան կապերով էին կապուած ձեզ հետ, կարծում էի, Ձեզ մօտ ես չունենալ նլ և մուտ. բայց զարմանքս մեծ էր, երբ Դուք ընդունեցիք և քաջալերելով օգնեցիք ինձ. Արդարև մեծ էր զարմանքս, որ Դուք չ'նայելով մեծամեծութեան Թշնամիներիս և վստահամբաւ լուրերին, որ տարածել աշխատել էին մի քանի բազմախնդիր շահամոլ մարդիք, որ Ձեր օգնութիւնից ես զրկեն արդար կարօտեալս, այնու ամենայնիւ չ'զլացաք հասցնել ազատական օգնութիւն այն անբաւ տարաբաղդ վիճակիս մեջ. Ձեր բարեկամութիւնը ու բարերարութիւնը կ'մնայ ընդ միշտ անջնջելի իմ կրծքի տախտակի վերայ. Որոյ համար և խնդրում եմ ընդունէ՛ք այս տողերը, որպէս նշան անհուն շնորհակալութեան և անկեղծ բարեկամութեան Ձեր միշտ երախտապարտ ծառայից՝

ՎԱՍԱԿ ՊԱՊԱՋԱՆՅԱՆՑ

28 Դեկտեմբերի 1879.
Երևան.

ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄ ԽՄԲԱԳԻՐ «ՊՍԱԿ» ԼՐԱԳՐԻ

Պ. ՎԱՍԱԿ ՊԱՊԱՋԱՆԵԱՆ.

Մոսկուայի Հայ ուսանողութիւնը չէ կարող անտարբեր մնալ դէպի այն ուրախալի լուրը, որ ծանուցանում է Թէ ներկայ տարուց սկսած ձեր Խմբագրութեամբ կը հրատարակուի Երևանում «Պսակ» անունով շաբաթաթերթ:

Մի այսպիսի բազմախորհուրդ ժամանակ երբ ազգի բարոյական և մտաւոր վերածնութիւնը միմիայն գաւառական և գիւղական ժողովրդի սթափելով կարող է իրականութիւն ստանալ, երբ մի գաւառական հայ Թերթի անյետաձգելի պահանջն է զգացվում, երբ ժամանակակից հայ գրականութեան մեջ խիստ

ցերեկ է աշխատում, բայց ի՞նչ-Աղան, բաղդի որդին, ուտում ու մարսում է:

Օրհանքը՝ զրկանքին հետևելով օրերն անցել ու գնացել են և նա, տարաբաղդը զրկուել է մինչև անգամ այն արտօնութենից, որ կենդանի արարածների որոշիչ յատկանիշն է: Մի կենդանի իւր քրտամբ երևացած վաստակածը զործ է դնում իւր կեանքը ողջ ու յարատևակ պահպանելու համար, մի ծառ, մի բոյս անանում է իւրեան շրջապատող հողից ու ջրից—իսկ խեղճ գիւղացին— ո՛չ հող, ո՛չ ջուր, ո՛չ տուն, ո՛չ տեղ:

Նորա երեսը ծիծաղ չէ գալիս, նա չգիտէ սրտի ուրախութիւն. նա գիշեր ու ցերեկ միատեսակ է անցուցանում. լացով ու կոծով: Նորա համար չկայ լոյս. արեգակը դեռ ևս չի ծագել նորա համար. Նորա ջերմ ճառագայթները դեռ ևս չեն հպել այն սառուցը, անհուն դողը, որ քանի դար ի վեր դիզուել է նորա կրծքի վերայ. Ի՞նչ ունի նա իրաւունք:

Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը, արեգակն ու աստղները, ջուրն ու ցամաքը, բոյսն ու անասունը և վերջը մարդը, իւր պատկերին մարդը, որին յանձնելով բոլորն այս, ասաց «աճեցէ՛ք և բազմացարուք»: Նա տուեց մարդուն և ո՛չ Աղային: Բայց այսօր Աղան է վայելում այս բոլորը և ո՛չ մարդը: Աղայ ես, ապա և ունիս իրաւունք ասնելտալ, ուտել-խմել, պատժել-անարգել, յափշտակել-բամբասել, զրկել-սպանանել, կողոպտել, և այլն, և այլն: Այս հրաշքներից յետոյ գիւղացուն մնաց Պարին ու Զոմախը: Նա առաջինը գործ էր դնում իւր հանապազորդ հացը հայթայթելու. իսկ երկրորդը որպէս նեցուկ իւր սպառուած ու դեգերուած անձին: Ժամանակով Աղան յափշտակեց պարկը, կամենում էր և յափշտակել Զոմախը, բայց չյաջողեց: Անթիւ ու անյամար աշխատանքներ գործ դրվեցին որ այդ վերջինը ևս նորանից խլեն. բայց անհնարին էր: Գիւղացին չտուեց, նորան հարկաւոր էր այդ Զոմախը: Բանականութիւնը նորան ասում էր, տո՛ւր պարկդ, բայց պահիր Զոմախդ. Զոմախով կարող ես ձեռք բերել պարկ, բայց պարկով երբէ՛ք Զոմախ: Նա լսեց բանականութեանը, տուեց յափշտակողին պարկը և պաշտեց սրբի տեղ Զոմախը. Զոմախը . . անգին Զոմախը:

*

Այժմ մեր գիւղացին ունի միայն մի Զոմախ, օրհնեալ է փայտն, որով լցի արդարութիւն:

*

Նա ունի Զոմախ, բայց չունի բազուկ. Նորա բաղկի ոյժը անյամար նեղութիւններից Թուլացած ու համարեա սպառուած է-հարկաւոր է սնունդ: Նորա անգործունէութենից կորցրել են մկանունքները իւրեանց առաձգականութիւնը—հարկաւոր է կրթութիւն.

*

Նոցա միակ առատ աղբիւրներն են երկրագործութիւնը ու վաճառականութիւնը 1).

*

Նոցա կրթութեան միակ աղբիւրն է ուսանողութիւնը 2). կրթել, դաստիարակել հասարակ ժողովուրդը կարող է միայն կրթուածն ու դաստիարակուածն:

Ուրեմն Ձեզ եմ դիմում ՈՒՍԱՆՈՂՆԵՐ, Դուք, որ հասկացել էք տկարութիւնը, կարող էք և Դուք միայն նորան բուժել:

ՎԱՍԱԿ ՊԱՊԱՋԱՆԵԱՆՑ

---

(1) Անհերին անմիտ բան է այն վիճաբանական խնդիրը, արդեօք երկրագործութիւնը, Թէ վաճառականութիւնը աւելի մեր ազգի համար մեծակշիռ էր. Երկուքը ևս հաւասարապէս նշանաւոր են, օգտաւէտ ու օգտաբեր են, և մեկի յետ մնալը կամ յառաջ գնալը արտադրում է օգտակար—կամ վնասակար ազդեցութիւն միւսի վերայ. Մենք ցանկանում ենք մեր ազգի համար երկուքն էլ.

(2) Սխալ դատողութիւն է, վաղուց արմատացած մեր ազգի մեջ, Թէ Հայոց Կաթուղիկոսը կամ առաջնորդքը պիտոյ է լինէին լուսաւորութեան տնտեսք և սպասաւորք. ո՛չ Մարկոսը և ո՛չ Կիրակոսը, այլ ինքը ազգը իւր ձեռքով պարտական է սերմանել, եթէ կամենում է մի օրհնեալ և սուրբ հունձ հնձել. Հերիք պատճառ ունենք շնորհակալ լինելու մեր հոգևորներից, երբ միայն հոգաբարձու լինէին դոքա հոգևոր դպրոցներ հիմնելու արժանաւոր քահանայք պատրաստելու ազգի համար. բայց ո՛չ այնպիսի դպրոցներ, որ կային այժմս զանազան տեղերում, այլ օրինաւոր, մեր ժամանակի կարօտանքը լցուցանող. Հերիք երախտապարտվելու էինք, եթէ հոգևոր իշխանութիւնը հոգս տանէր օրինաւոր քահանայք պատրաստելու համար, քահանայք ասումենք, հասկանալով մի այնպիսի պաշտօնեայ, որ օր ըստ օրէ Աստուծոյ բանին սպասաւորելով,

կերպով նկատելի է մի այնպիսի օրգանի պակասութիւնը, որ իր գլխաւոր ուշադրութիւնը դարձնէր տեղական ժողովրդի կենսական—տնտեսական և մտաւոր—խնդիրների վրայ, երբ դատարկ է այն լրագրի տեղը, որ զբաղվէր միայն ներքին, բուն ժողովրդական հարցերով, մի այնպիսի ժամանակ ամէն մի ձգտում լցուցանելու այդ դատարկութիւնը պէտք է ամենայն համակրութեամբ ընդունվի նրանցից, որոնց համար թանկ է և ցանկալի գաւառական և գիւղական ժողովրդի բարօրութիւնը.

Թէև մենք դեռ ծանօթ չենք „Պսակ" լրագրի ուղղութեան հետ, բայց որովհետև Դուք ձեռնարկել էք մի գաւառական թերթի հրատարակութեան Երևանի պէս մի կենդրոնում, որտեղ հայ տարրը զարգացած է, ուստի մեզ համար քաղցր է յուսալ, Պ. Խմբագիր, որ „Պսակը", իբրև առաջին և միակ հայ գաւառական թերթ, մասամբ կիրականացնէ մեր յանկալութիւնը, զբաղելով գլխաւորապէս հայ ժողովրդի ներքին հարցերով, մշակելով տեղական խնդիրներ, որի համար Մոսկուայի հետևեալ հայ ուսանողներս առաջուց յայտնում ենք ձեզ մեր համակրութիւնը.

Հայ ուսանողներ Համբ. Առաքելեան-Տէր Բարսեղեան
Մ. Ցարութիւնեանց.
Խ. Բահաթրեանց.
Ա. Տէր-Մովսեսեանց.
Ս. Դադեանց.
Ց. Տէր Մովսէսեանց.
Ա. Քալանթարեանց.
Թ. Մարգարեանց.

Մոսկուայ 3 Փետր. 1880 Թ.

ՆՈՐՈՒԹԻՒՆ ԼՈՒՐԵՐ.

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. բժիշկ Գ. Տէր Գրիգորեանցից այս տարի Էջմիածնում հրատարակած գրքոյկը „Վարակիչ Հիւանդութիւններ" վերնագրով: Գրքոյկը գրուած է բաւական պարզ լեզուով, բայց կարծում ենք աւելի հասկանալի ու դիւրըմբռնելի կը լինէր, եթէ պ. բժիշկը բոլոր ուսում նական ոճերը հանդերձ ռուսերենի թարգմանութեամբ գործ ածէր. Այնու ամենայնիւ խորհուրդ ենք տալիս մեր ընթերցասէր հասարակութեանը որ այդ գրքոյկը առանց ուշադրութեան չթողայ և նորանից քաղէ ամէն մարդու համար պահանջելի օգուտն. Այդ գրքոյկի վերայ մէկ ուրիշ ժամանակ աւելի մանրամասնօրէն կ'խօսենք, առ այժմ ցանկանումենք միայն որ նա շատ տարածուի ու կարդացուի.

*

Հինգշաբաթէ Փետրվար ամսի 28 ին, Ռուս թատրոնասիրաց մի խումբ տուեց մի ներկայացում Երևանայ Պրոգիմնազիայի հքաւոր աշակերտների համար՝ սուրբ Գայիանեան օր. Դպրոցի դահլիճում.

Դահլիճն լիքն էր խուռն բազմութիւնով. ծափահարութիւններ ու անվերջանալի „բռավոներ" անդադար ղըղրտեցում էին Երևանայ մանկահասակ թատրոնական դահլիճը.

Խաղացողներից երեքը՝ Տիկին Ժուկովսկին, տիկէն Միսլովսկին և Իշխան Թումանեանը կատարեցին իւրեանց դերերը ամենայաջող կերպիւ. մանաւանդ առաջինը և երկրորդը.

Առաջինը, որ ներկայացնում էր գիւղումը մեծացած տասն և եօթ տարեկան ազնուական դասից մէկ օրիորդ, այնքան բնական ու աշխուժով էր կատարում իւր դերը, որ ներկայ եղողներից շատերը, մանաւանդ հասկացողները, բառ չէին գտնում իւրեանց սրտի ուրախութիւնը արտայայտելու և գովեստներ ասելու. Տիկին Ժուկովսկին, կարծես, ծընած է դերասանուհի լինելու. որովհետև նորա գնացքը, նորա քաղ բաձայն արտասանութիւնը. Նորա վստահութիւնը բեմի վերայ խօսել, ման գալ, և բոլորն այդ մէկ այն տեսակ բնական, համարեա երեխայական աշխուժով էր, որ պատիւ կ'բերէր մինչև անգամ մայրաքաղաքների ամենալաւ դերասանուհիներին.

Տիկին Միսլովսկին, որ նոյնպէս շատ յաջող էր իւր դերում, երգեց բաւականին լաւ.

Ապա, յայտնելով երկուսին ևս մեր կողմից առ ի սրտի մեր շնորհակալութիւնը, խնդրում ենք միւս բարեպատեհ դէպքում չխնայել իւրեանց օժանդակութիւնը այդ կամ և սուրբ գործի համար.

*

Հինգշաբաթէ, Փետրվար ամսի 28-ին Երևանայ Հոգևոր Դպրոցի Հոգաբարձուներն կատարեցին Վարդանանց տօնը. Հոգաբարձուները, ուսուցիչները և թեմական Դպրանոցի աշակերտները ժողովուած էին Սուրբ Սարգիս Եկեղեցում, ուր պատարագից յետոյ թեմական Առաջնորդ Եղիազար Արք Եպիսկոպոսը՝ այդ տօնի վերաբերութեամբ մի քանի ազդու խօսք ասելուց յետոյ, հրաւիրեց փոքրաթիւ ժողովուրդը ուսումնարանի դահլիճը. Այստեղ պէտք է կարդային ճառեր՝ թեմական Դպրոցների Տեսուչ պ. Պերճ Պռոշեանցը, պ. պ. Տէր Ղևոնդեանցը և Բէկնազարեանցը. Եկեղեցուց դուրս բակումը, նախ կատարեցին հոգեհանգիստ Ստեփան Եպիսկոպոսի, նախկին Երևանայ թեմակալ Առաջնորդի և հիմնադիր թեմական Դպրանոցի, գերեզմանի վերայ, յետոյ երգեցողութեամբ դիմեցին ուսումնարանի դահլիճը, որ պատրաստ էր ընդունելու հիւրերին. Դահլիճը շատ անշքեղ զարդարած էր. ժողովուրդը սակաւաթիւ էր, այնպէս որ ուսումնարանի հոգաբարձուների, ուսուցիչների և մի քանի ի սրտէ ուսումնարանական գործերով զբաղվող անձինքների ներկայութեամբ, կարդացուեցան, կանխապէս պատրաստի ճառերը. Երեք ճառ կարդացուեցան, որից միայն մէկը, պ. Տէր Ղևոնդեանցինը, նշանաւոր էր իւր ազգու բովանդակութեամբ.

Այս տօնախմբութիւնից յետոյ՝ հոգաբարձուներից մի քանիսը [և] բոլոր ուսուցիչները ժողովուեցին մեծ. Վարդան Եղիազարեանցի ընդարձակ դահլիճը մի շքեղ ճաշկերոյթի. Փափկասուն տիկնայք, գեղեցկադէմ օրիորդք զանազան պարերով, երգերով վերջացրին այս մեծ տօնախմբութիւնը ճաշից յետոյ ժամու 8 ին.

*

Խմբագրութիւնը խոնարհաբար խնդրում է ներողութիւն, որ „Պսակը", փոխանակ հրատարակուելու Յունվար ամսի 15-ին արդէն հրատարակուած Յայտարարութեան համաձայն, այսօր է միայն կարողանում լոյս ընծայել նորա առաջին համարը. Այս տեսակ յետաձգութեան բոտիպուած էինք մենք երկու գլխաւոր պատճառներից, մէկը գրաքննիչ նըշանակվելու, իսկ միւսը մեր Երևանու տպարաններում տառերի պակասութեան պատճառաւ. Գրաքննիչ նշանակվեցաւ միայն Մարտի սկզբըներում Երևանայ նահանգական կառավարութեան մէջ ծառայող Ստորագրող Տրդատ Վարդանեանցը. Իսկ տպարանը, շնորհիւ մեծ. Յուսիկ և Սիւրեղ վարդապետների և պ. բժիշկ Տէր Գրիգորեանցի այն է հիմնըւում է և յայս ունինք շուտով կծառայի մեր նպատակին. Մենք յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը վերոյիշեալ անձինքներին և նոցա, որոնք չխնայեցին իւրեանց գործունէութեամբ նպաստել այս գործի յաջողութեանը և յառաջադիմութեանը.

Խմբագիր—Հրատարակիչ
ՎԱՍԱԿ ՊԱՊԱՃԵԱՆ.

պիտի մխիթարէր և շինէր մեր սիրտը և հոգին. Մեր կարծիքով մեծ բան է քահանան, կը ցանկանայինք, որ ինքեանք քահանայք այնչափ հասկանային իւրեանց արժանաւորութիւնը և խորհուրդը մարդկեղէն աշխարհի մէջ, որչափ մենք ճանաչում էինք նորան. Քահանայն պիտի վարդապետէ ժողովրդին Աստուծոյ բանը առանց քրիստոնէական կրօնի ուսման անհիմն է ամենայն լուսաւորութիւն. Եւ քրիստոնէական կրօնի ուսումը պէտք է բղխի Յիսուսի Քրիստոսի աստուածային և կենդանարար աղբիւրից, —Աւետարանից. Առանց Նոր Կտակարանի սուտ է ամենայն քրիստոնէութիւն, և մեր ազգին բարոյապէս ամրանալու համար հարկաւոր էր կարդալ սուրբ գիրքը, ուրեմն հարկաւոր էր և թարգմանել նորան ժողովրդական, նոր և կենդանի հայախօսութեամբ",
(Մ. Նալբանդեան).

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պատրաստ են տպագրութեան համար երկու պիէսաներ

„ՄՕՊՍ"

Կոմեդիա—վօդեվիլ մէկ արարուածով.

և

ԿՌՈՒԵՂԵՑԻԿԸ
ԵՍ ԷԻ

Կատակերգութիւն մէկ արարուածով
(Թարգ. ռուսերէնից):

1–3

Զ. Գէորգեան և ընկերութեան տպարանում ընդունվում են զանազան տեսակ ցակագներ, բլանկներ, պրէյսկուրանտներ, յայտարարութիւններ, գրքեր և այլն, շատ չափաւոր գներով: Ցանկացողք կարողեն դիմել հետևեալ հասցէով В Ъ Типографію З. Кеворкова и К°. Въ Эривань.

1–4

ԷԼ ՁԱՐԵՍ ԻՆՁ
ԿԱՄ
ԵՐԿՈՒ ՍԻՐՈՀԱՐ

Մէկ արարուածով

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Վաճառւում է

Տփխիսում կենտրոնական և պ. Զ. Գրիգորեանի գրախանութներում.
Բագւում պ. Գ. Դիլդարեանցի Թեմի խանութում.
Երևան մեզ մօտ (...)

ԷՄԻՆ ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ.

Дозволено Цензурою гор. Эривань. 14 Марта 1880 г.

Типографія З. Кеворкова и К-о.